**<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄԱՆԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ (ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ, ՊԱՐԱԳԱՆԵՐԻ և ԴԵՂՈՐԱՅՔԻ) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N** ***«ԳՀԱՊՁԲ-2019/16-10-ԵՊԲՀ/3»***

ք. Երևան << >> << >> 2019 թ.

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Ա. Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Լևոն Խաառատյան Ա/Ձ-ն, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 **(տաս)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 **(տաս)** օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1026640 (մեկ միլիոն քսանվեց հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

**Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:**

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:**

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| <<ԳՆՈՐԴ>> | ՎԱՃԱՌՈՂ |
| <<Երևանի Մխիթար Հերացու անվան | Ա/Ձ Լևոն Խառատյան |
| պետական բժշկական համալսարան>> | Հասցե՝ք.Երևան, Թումանյան 23 |
| Հիմնադրամ | Բանկ՝ «Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» |
| Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2 | Երևան մոլ մասնաճյուղ |
| Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ | h/h 220479670527000 |
| h/h 11500166513800 | ՀՎՀՀ 27931532 |
| ՀՎՀՀ 01503448 | |
| Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան | Digitally signed by BAGHDAGYULYAN HASMIK 6810750088<br>Date: 2019.05.03 21:57:41 AMST |
| _____ | --- |
| (ստորագրությունը) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.07 15:00:58 AMST

*Հավելված N 1*
*«  »  20  թ. կնքված*
N *«ԳՀԱՊՁԲ-2019/16-10-ԵՊԲՀ/3» ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը *** |
| 1 | 33411400 | K-ֆայլ՝ N06, N6 , Perfect | Shenzhen Perfect medical Instruments Co.Ltd, Չինաստան | K -ֆայլ՝ արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 21մմ, 25մմ, 28մմ, 31մմ: Չափը՝ 06: Ֆորմատ՝ 6 ֆայլեր հավաքածույում/հատ: Պատրաստված է բարձր որակի մետաղից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 950 | 38000 | 40 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 40 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 2 | 33411400 | K-ֆայլ՝ N08, N6 , Perfect | Shenzhen Perfect medical Instruments Co.Ltd, | K -ֆայլ՝ արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 21մմ, 25մմ, 28մմ, 31մմ: Չափը՝ 08: Ֆորմատ՝ 6 ֆայլեր հավաքածույում/հատ: | հատ | 950 | 38000 | 40 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնոր | 40 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Չինաստան | Պատրաստված է բարձր որակի մետաղից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | դի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | | կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 7 | 33411400 | Հ-ֆայլ՝ N06, N6 , Perfect | Shenzhen Perfect medical Instruments Co.Ltd, Չինաստան | Հ-ֆայլ՝ արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 21մմ, 25մմ, 28մմ, 31մմ: Չափը՝ 06: Ֆորմատ՝ 6 ֆայլեր հավաքածույում/հատ: Պատրաստված է բարձր որակի մետաղից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 950 | 38000 | 40 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 40 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 8 | 33411400 | Հ-ֆայլ՝ N08, N6 , Perfect | Shenzhen Perfect medical Instruments Co.Ltd, Չինաստան | Հ-ֆայլ՝ արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 21մմ, 25մմ, 28մմ, 31մմ: Չափը՝ 08: Ֆորմատ՝ 6 ֆայլեր հավաքածույում/հատ: Պատրաստված է բարձր որակի մետաղից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 950 | 38000 | 40 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 40 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 14 | 33411400 | Հ-ֆայլ՝ N35, | Shenzhen | Հ-ֆայլ՝ արմատախողովակը | հատ | 950 | 38000 | 40 | *Մատ | 40 | Ապրանքի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | N6 , Perfect | Perfect medical Instruments Co.Ltd, Չինաստան | մշակելու համար: Երկարությունը՝ 21մմ, 25մմ, 28մմ, 31մմ: Չափը՝ 35: Ֆորմատ՝ 6 ֆայլեր հավաքածույում/հատ: Պատրաստված է բարձր որակի մետաղից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | ակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | | մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 15 | 33141193 | Արմատալցիչ N4 , Perfect | Shenzhen Perfect medical Instruments Co.Ltd, Չինաստան | Արմատախողովակը լցոնելու համար: Երկարությունը՝ 21մմ, 25մմ, 29մմ, ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 4 արմատալցոնիչներ տուփում/հատ: Կազմված է առանցքից և զսպանակից: Արմատալցիչի խիտ զսպանակը անմիջապես սկսվում է առանցքից և կլանում պուլսացիոն շարժման ուժը՝ մեծացնելով դիմացկունությունը: Լիցքանյութը բաշխվում է հավասարաչափ և կանխվում է օդային պղպջակների առաջացումը: Պատրաստված է չժանգոտվող պողպատից, որն ապահովում է գերէլաստիկություն և փոքրացնում է կոտրվելու հավանականությունը: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 1240 | 49600 | 40 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 40 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 18 | 33131180 | Կծվածքապատճենող թուղթ N12, | Best Dent, Չինաստան | Կծվածքապատճենող երկգույն թուղթ, միանվագ օգտագործման համար: Տուփը բաղկացած է 12 հատ | հատ | 2450 | 49000 | 20 | *Մատակարարումն իրականացվու | 20 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Hydrophilic Paper | | փաթեթից, որից յուրաքանչյուրը բաղկացած է 25 հատ պատճենահանող թղթից: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | մ է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | | թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 19 | 33141100 | Բամբակե գլանակ,Sense | ООО «Коттон Стайл» , Ռուսաստան | Բամբակե գլանակ, որը նախատեսված է ատամը թքից մեկուսացնելու համար: Կազմված է 100%-անոց բամբակից, հաստությունը՝ 10մմ, երկարությունը՝ 38մմ: Ֆորմատ՝ 1 հատ բամակե գլանակ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 2.1 | 31500 | 15000 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 15000 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 28 | 33141211 | Ռենտգեն ժապավեն ստոմատոլոգիական, Foma Dentix | Foma Bohemia spol., Չեխիա | Ռենտգեն ժապավեն ստոմատոլոգիական 3x4 սմ չափսի: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 83.333 | 500000 | 6000 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեն | 6000 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | երով: | | |
| 31 | 33411560 | Պուլպէքստրակտոր, Кмиз | ОАО «Казанский медико-инструменталхный зажод», Ռուսաստան | Պատրաստված է չժանգոտվող մետաղից, նախատեսված պուլպայի հեռացման համար, մինվագ օգտագործման: Ֆորմատ՝ 1հատ պուլպէքստրակտոր/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 35 | 80500 | 2300 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 2300 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 34 | 33141193 | Գուտապերչե գամեր՝ խառը համարներ N15-40, N120, Gapadent | Gapadent LTD, Չինաստան | Գուտապերչե գամեր՝ խառը համարներ, N15-40 գուտապերչե գամեր արմատախողովակի օբտուրացիայի համար: Ունեն գունային կոդավորում: Ֆորմատ՝ ոչ պակաս, քան 120 հատ գուտապերչե գամեր տուփում/հատ: Չափսերը ըստ պտվիրատուի պահանջի: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն:: | հատ | 1040 | 27040 | 26 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով: | 26 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 46 | 33141193 | Ֆրեզ –ԿՀՁ, բարակ, Кристал | ООО «Алянс», Ռուսաստան | Ֆրեզ –ԿՀՁ, բարակ -կոնաձև, սրածայր, ուղղիղ, սև գոնավարմամբ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 1650 | 49500 | 30 | *Մատակարարումն իրականացվում է՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Աբովյա | 30 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացվ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ն 60 և/կամ Մուրա ցան 114 հասցեն երով: | | ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա ընթացքում |
| 47 | 33141193 | Ֆրեզ-ԿՀԶ, հաստ , Кристал | ООО «Алянс», Ռուսաս տան | Ֆրեզ-ԿՀԶ, հաստ - կոնաձև, ուղղիղ, մանր ատամիկներով, մետաղը հղկելու համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն:: | հատ | 1650 | 49500 | 30 | *Մատ ակարա րումն իրակա նացվու մ է՝Գնոր դի նշված հասցեո վ, ք. Երևան Աբովյա ն 60 և/կամ Մուրա ցան 114 հասցեն երով: | 30 | Ապրանքի մատակարա րումն իրականացվ ում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա ընթացքում |

*Պարտադիր պայման, ապրանքի չօգտագործված լինելը*

**Բոլոր չափաբաժինների համար եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>**
**Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**հ/հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

**_____**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.07 15:01:27 AMST

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Լևոն Խառատյան
Հասցե՝ք.Երևան, Թումանյան 23
Բանկ՝ «Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»
Երևան մոլ մասնաճյուղ
հ/հ 220479670527000
ՀՎՀՀ 27931532

Digitally signed by BAGHDAGYULYAN HASMIK 6810750088
Date: 2019.05.03 21:58:22 AMST

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«  »  20  թ. կնքված*
N *«ԳՀԱՊՁԲ-2019/16-10-ԵՊԲՀ/3» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33411400 | K-ֆայլ՝ N06, N6 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 2 | 33411400 | K-ֆայլ՝ N08, N6 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 7 | 33411400 | H-ֆայլ՝ N06, N6 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 8 | 33411400 | H-ֆայլ՝ N08, N6 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 14 | 33411400 | H-ֆայլ՝ N35, N6 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 15 | 33141193 | Արմատալցիչ N4 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 18 | 33131180 | Կծվածքապատճենող թուղթ N12 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 33141100 | Բամբակե գլանակ | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 28 | 33141211 | Ռենտգեն ժապավեն ստոմատոլոգիական | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 31 | 33411560 | Պուլպէքստրակտոր | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 34 | 33141193 | Գուտապերչե գամեր՝ խառը համարներ N15-40, N120 | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 46 | 33141193 | Ֆրեզ –ԿՀՁ, բարակ | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |
| 47 | 33141193 | Ֆրեզ-ԿՀՁ, հաստ - | 0 | 0 | 0 | 0 | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով, ըստ փաստացի մատակարարված ապրանքների քանակների*

**Եթե պայմանագրի գործողության ընթացքում Վաճառողի կողմից ապրանքների մատակարումը իրականացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա պայմանագիրը գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով լուծվում է:*

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>**
**Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**h/h 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

**_____**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.07 15:01:52 AMST

**ՎԱՃԱՌՈՂ**
Ա/Ձ Լևոն Խառատյան
Հասցե՝ք.Երևան, Թումանյան 23
Բանկ՝ «Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»
Երևան մոլ մասնաճյուղ
h/h 220479670527000
ՀՎՀՀ 27931532

Digitally signed by BAGHDAGYULYAN HASMIK 6810750088
Date: 2019.05.03 21:58:54 AMST

---
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ  N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը  Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20  թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն